ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆԻՆ՝ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆ,
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՍՏԱՆՊՈՒԼ

Սիրելի Սրբազան,

Սրտի գոհունակութեամբ տեղեկացանք Պոլսոյ Պատրիարքութեան Եկեղեցական համագումարի Դիւանի անդամներէն, որ երէկ, 3 Օգոստոսի առաւօտուն, Եկեղեցական համագումար է կազմած Պատրիարքարանի դահլիճին մէջ եւ Դուք ընտրուած էք Պատրիարքական Տեղապահ:

Այսու Հայրապետական գիրով կը շնորհաւորենք Ձեզ՝ Ձեզի վստահուած այս բարձր պաշտօնին եւ պատասխանատուութեան համար: Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Իր իմաստութեամբ Ձեզ զօրացնէ, որպէսզի լաւագոյն արդիւնքներով ի գլուխ հանէք Պատրիարքական Տեղապահի պաշտօնը թէ՛ Պատրիարքարանի ընթացիկ գործերու կատարման եւ թէ՛ նոր Պատրիարքի ընտրութեան կազմակերպման մարզերու մէջ: Թող սիրոյ, եղբայրութեան, միութեան զգացումները եւ սկզբունքները ըլլան առաջնորդ եւ մղիչ ոյժ Ձեր եւ Ձեր բոլոր հոգեւորական եւ աշխարհական գործակիցներուն, որպէսզի խաղաղ եւ օրինական պայմաններու տակ կատարուի յաջորդ Պատրիարքի ընտրութիւնը եւ դառնայ առիթ եւ միջոց առաւել եւս բարւոք եւ ատոր պտղաբերութեամբ արժեցնելու համար Պոլսոյ Պատրիարքական Աթոռի գործունէութիւնը ի սպաս մեր Սուրբ Եկեղեցւոյ վերածաղկումին եւ հոգեւոր բարգաւաճումին եւ ի վայելումն Թուրքիոյ Հայոց մեր սիրեցեալ եւ հաւատարիմ զաւակներուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4 Օգոստոս, 1998
Նիւ Եորք